

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄՔ ՓՈԽՄԱՐԶՊԵՏ Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ Է ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱԶԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Մարտի 26-ին ՀՀ Սյունիքի մարզպետ ՀՀ Սուրիկ Խաչատրյանի հանձնարարականով Քաջարանի բժշկական կենտրոնում անցկացվեց ընդլայնված խորհրդակցություն ներհիվանդանոցային վարակների կանխարգելման արդի չափանիշների պահպանման և պահանջների կատարման վերաբերյալ: Խորհրդակցությունը վարում էր ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը: Ներկա էին մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գևորգյանը, ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիք մասնաճյուղի, ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Սյունիքի մարզի փորձագիտական կենտրոնի, Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերի և մարզի բոլոր բժշկական կենտրոնների ղեկավարներ, Քաջարանի բժշկական կենտրոնի աշխատակիցներ:

Վ. Գրիգորյանը դիմելով ներկաներին, նշեց.

-Մարզի բոլոր բժշկական կենտրոններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում վեր են հանվել մի շարք թերություններ և բացթողումներ: ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի կողմից հանձնարարվել է իրականացնել կոնկրետ միջոցառումներ թերությունների արագ վերացման և կանխարգելման ուղղությամբ: Այս ընդլայնված խորհրդակցությունը սկիզբն է մի համակարգված գործընթացի, որի արդյունքում մարզի բոլոր բժշկական կենտրոններում կշարունակվի իրականացվել անվտանգ ու ապահով բժշկական ծառայությունների մատուցում:

Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար Վ. Գևորգյանը անդրադառնալով քննարկվող հարցերին նշեց.

-Ներհիվանդանոցային վարակի պարագայում ՀՀ Սյունիքի մարզպետի օպերատիվ արձագանքը, հնարավոր դարձրեց խնդրի արագ ու ամբողջական լուծումը: Հիվանդանոցը համալրվեց նոր կադրերով և հանձինս նորանշանակ գլխավոր բժիշկ Հ. Դավթյանի և շարունակում է գործել, ձգտելով պահպանել բուժանձնակազմի սպասարկման և ծառայությունների մատուցման բարձր մակարդակը: Քաջարան համայնքի զարգացման ծրագրերի մեջ մշտապես նախատեսվում են ֆինանսական միջոցներ բժշկական կենտրոնին անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման համար: Այս տարի նախատեսվում է միջազգային չափանիշներին

համապատասխանող ուտիլիզացիոն սարքավորման ձեռքբերումը, որը կապասարկի մարզի բոլոր բժշկական կենտրոններին:

Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ն. Գևորգյանը ներկայացրեց խորհրդակցության նպատակն ու քննարկվող հարցերի շրջանակը.

-Այսօր մեր խորհրդակցությունն անցկացվում է Քաջարանի բժշկական կենտրոնում, որը պատահական չի ընտրվել մեր կողմից որպես խորհրդակցության վայր: Այս բժշկական կենտրոնը առաջինն էր, որտեղ իրականացվեցին մասսայական ստուգումներ, կապված ներհիվանդանոցային վարակի առկայության հետ: Ցանկանում եմ ընդգծել որ, ՀՀ ԱՆ հրամանով ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված թերությունների գերակշիռ մասը վերաբերում է գրանցամատյանների կամ դրանց մեջ գրառումների բացակայությանը, ինչը սակայն չի նշանակում, որ անհրաժեշտ աշխատանքները չեն կատարվել հավուր պատշաճի: Ես ցանկանում եմ, որ բոլորդ ծանոթանաք այս հիվանդանոցի շենքային պայմաններին և տեխնիկական զինվածությանը. այն եզակի է հանրապետությունում:

Ն. Գևորգյանը ներկայացրեց նաև Հայաստանի Հանրապետությունում ներհիվանդանոցային վարակների կանխարգելման գործընթացը կարգավորող իրավական ակտերը, հավելելով, որ դրանք էլեկտրոնային փոստով առաքված են մարզի բոլոր բժշկական կենտրոնների տնօրեններին: Յուրաքանչյուր հիվանդանոցի համար կարևորվեց ներհիվանդանոցային վարակի կանխարգելման համալիր ծրագրի առկայությունը:

<<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ բուժական գծով փոխտնօրեն Վ. Մանասյանը ներկայացրեց <<<< ԱՆ աշխատակազմի առողջապահության պետական տեսչության Սյունիքի մարզային կենտրոն>>-ի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացված զննման արձանագրության մեջ նշված թերություններն ու բացթողումները, որոնք շտկվել և վերացվել են համաձայն տեսչության կողմից նշված ժամանակացույցի: Քաջարանի բժշկական կենտրոնում արդեն վերագործարկվել է վիրահատարանը, որտեղ մարտի 21-ից իրականացվում են վիրահատություններ:

Ծավալվեց աշխատանքային քննարկում, որի ընթացքում ուղենշվեցին հետագա անելիքներն ու համագործակցության շրջանակները: